ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2023, հ. 76, N 1, 67-68
Известия НАН РА Науки о Земле, 2023, т. 76, N1, 67-68
Proceedings NAS RA, Earth Sciences, 2023, v. 76, N 1, 67-68

ԹԻՎ 1 ՀԱՏՈՐ 76 2023

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ

ՀՀ ԳԱԱ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԸ

- փետրվարի 3-ին, «ԽՍՀՄ-ում հայ երկրաբանների և հանքագործների դեմ բռնաճնշումները», զեկուցող՝ Երկրաբանական թանգարանի ավագ գիտաշխատող ե.գ.դ., Գեորգի Խոմիզուրի
- Փետրվարի 15-ին, «Ջրային օբյեկտների հեռահար զոնդավորումը տիեզերքից և ջրից՝ ցածր անկման անկյունների պայմաններում», զեկուցող՝ Ռուսաստանի, ՌԳԱ Կիրառական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող, ֆիզ. մաթ. գ.թ., Մարիա Պանֆիլովա
- ապրիլի 6-ին, «Մագմատիկ ծծմբի դերը կղզաղեղային ծագման օգտակար հանածոների հանքավայրերի ձևավորման գործում», զեկուցող՝ ՌԳԱ ՀԱԲ «Պետրոպավլովսկ-Կամչատկա», Հրաբխականության և սեյսմոլոգիայի ինստիտուտի գիտաշխատող, ե.գ.թ., Նեկրիլով Նիկոլայ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

- Լիթոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիայի գիտաշխատող Տարոն Գրիգորյանը փետրվարի 16-ից 3 ամսով գործուղվել է Գերմանիայի Դաշնություն՝ Գրեյսֆալդի համալսարան, DAAD ծրագրի շրջանակներում գիտական աշխատանքներ իրականացնելու նպատակով:
- Հնէաբանության և շերտագրության լաբորատորիայի գիտաշխատող, գ.թ. Վահրամ Սերոբյանը մարտի 13-18-ը գործուղվել է Ֆրանսիայի Լիլի համալսարան գիտական հետազոտություններ իրականացնելու նպատակով: Ֆինանսավորումը՝ Գալուստ Գյուլբեկյան հիմնադրամ:
- Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիայի առաջատար գիտաշխատող, գ.թ. Հեկտոր Բաբայանը մարտի 26-ից 31-ը գործուղվել է Ղազախստան՝ ք.Ալմաթի, ՄԳՏԿ Kr 2452 ծրագրի և Միչիգանի համալսարանի կողմից կազմակերված աշխատանքային ժողովին մասնակցելու նպատակով:
- Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, ե.գ.դ. Խաչատուր Մելիքսեթյանը ապրիլի 21-ից 28-ը գործուղվել է ք.Վիեննա (Ավստրիա), ՄԱԳԱՏԷ-ում փորձագիտական

առաքելություն իրականացնելու և EGU-2023 գիտաժողովին մասնակցելու նպատակով: Գործուղման ծախսերը իրականացվել են PEER-Science ծրագրի միջոցներից:

- Հրաբխագիտության լաբորատորիայի ավագ գիտ.աշխատող, ե.գ.թ. Գևորգ Նավասարդյանը ապրիլի 21-ից 28-ը գործուղվել է ք.Վիեննա (Ավստրիա), EGU-2023 գիտաժողովին մասնակցելու նպատակով: Գործուղման ծախսերը՝ 21T-E302 ծրագրի միջոցներից:
- Հրաբխագիտության լաբորատորիայի գիտաշխատող Էդմոնդ Գրիգորյանը ապրիլի 21-ից 28-ը գործուղվել է ք.Վիեննա (Ավստրիա), EGU-2023 գիտաժողովին մասնակցելու նպատակով: Գործուղման ծախսերը՝ PEER-Science ծրագրի միջոցներից:
- Հնէաբանության և շերտագրության լաբորատորիայի գիտաշխատող, ե.գ.թ. Վահրամ Սերոբյանը ապրիլի 17-22-ը գործուղվել է ք.Թբիլիսի, (Վրաստան), միջազգային գիտական կոնֆերանսին մասնակցելու նպատակով: Գործուղման ծախսերը՝ 22RL-016 թեմայի միջոցներից:

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ գիտական գծով փոխտնօրեն՝
Լիլիթ Սահակյան